Զոննին գնում եր Մոսկվա:

Առաջիոյվ հայտնել ելին Անդլիայից, վոր հանքա-
փորերի պատգամավորություն ե գալիս Մոսկվա: Դրանց
հետ գալիս եր և փոքրիկ Զոննին: Յերբ ուստ յերեխանե-
րը իմացան վրա մասին, շատ ուրախացան և առավոտ
ժամը 7-ից արգեն անհամբեր սպասում ելին կայարա-
նում գնացքին: Գնացքը յերբ մոտեցավ, յերեխաները
իբրաք անցան:

Հանքափոր պատգամավորները սկսեցին իջնել վա-
գոնից: Յերեխաները աչքերը չուծ նայում ելին, հրում
միմ յանց, վոտքերի ծայրին բարձրանում. ամեն մեկը
աշխատում եր տեսնել փոքրիկ հյուրին: Քիչ հետո տե-
սան փոքրիկ Զոննիին, վոր իջնում եր մի մեծ պայու-
սակ ձեռքին:

«Նայեցեք, նայեցեք, նայե, դալիս ե.»

Զոննին մոտեցավ, հանեց կեպին և ուրախ բարե-
լեց.

— «Բարի ձեզ, ընկերներ, յես յեկել եմ Անդլիայից՝
Հայտնելու շնորհակալություն բոլոր Հանքափորերի յե-
րեխաների կողմից. դուք ովնեցիք մեզ»:

Յերեխաները ցնծությամբ ընկունեցին իրենց փոք-
րիկ հյուրին, վարի խոսքերը ծածկվեցին ուրախ բացո-
կանչություններով և մուզիկայի նվազածությամբ:

Հետո միասին ուղեվորվեցին քաղաք:

Փոքրիկ անդլիացին հիացած եր մեր պիոներների
ընդունելությունից:

Փարիզի կոմունայի փոքրիկ հերոսները

Փարիզի կոմունաբների հերոսական պայքարին մասնակցել են նաև յերեխաները։ Փոքրիկ կոմունաբները վառող և փամփուշտներ եյին հասցնում մեծերին։ կապում եյին վիրավորվածների վերքերը նույնիսկ զենքով կովում եյին բարիկադների վրա։

Այդ փոքրիկ հերոսների մասին ականատեսները պատմում են։

— Բարիկադներն անցնում եյին ձեռքից ձեռք։ Յերկու պատանի, մեկը 14, իսկ մյուսը 17 տարեկան, առաջին շարքերում եյին, յերբ խլեցին թշնամուց բարիկադը։ Յերբ փոքրը կարմիր դրոշակը ամրացնում եր դրաված բարիկադի վրա, մեկն ընկալ թշնամու գընդակից։

Մյուս ընկերը վերցնում է դրոշակը, ցատկում բարիկադի վրա և բուռնցքը սեղմած սպասնում է թշնամուն։ Նրան ել զետին է զլորում թշնամու գնդակը։

— Կոմունաբների ջոկատներից մեկը հսղթվեց։ Կենդանի մնացած կոմունաբները դրոշակը թողած, անցան մի այլ բրիկադ։ Տասնեւնողամյա կոմունաբր քարերի վրայից ցատկելով, գնդակների տարափի տակ բարիկադ է հասնում, վերցնում կարմիր դրոշակը և ձեռքին բոխած՝ նորից վազում է գեպի իր ընկերները։

— Կոմունան պարտվեց։ Հաղարավոր հաստիավորների հետ գնդակահարեցին հարյուրավոր փոքրիկ կոմունաբների։

Խնդրեցե՞ք ձեր դաստիվին, թող ոլոտի «Փարիզյան կոմունյի» մասին։

Դեպի վերընտրություններ

1

Շուտով կոկովեն խորհուրդների վերընտրությունները։

Բոլոր աշխատավորները կերթան ժողովների, վաճառքի հայրիկն ել կերթան։ Նա զործարանում է ոչխսա-

ուում։ Մայրիկն ել կերթան։ Միայն նա չի գնա։ Նա տանն և աշխատում։ Վո՞րտեղից և ի՞նչպես խմանա, ժողովների մասին։

Այս ինչպիս։

Ամենքին կանչենք ընտրությունների։

Արշոն և նրա դպրոցական ընկերները վազում են բոլոր տները, բոլոր բնականները, ծանուցաթերթեր են բաժանում և ասում են։

— Զմուանա՞ք, չմուանա՞ք, բոլոր բանվորները, բոլոր աշխատավոր գյուղացիները—թե՛ կին, թե՛ տղամարդ—պետք է ներկա լինեն վերընտրություններին։ Յերեխանները պլակատներ կազմեցին և փակցրին աչքի թիկանող տեղերում։ իսկ մի ահազին պլակատի վրա խորնեցին ամսագործությունների անունները։

2

Ընկե՛ր պիոններներ,

Վերընտրությունների որը մանուկների համար հատուկ մանկասենյակներ սարքեցեք, վորապեսզի մայրերն իրենց փոքրիկներին բներեն, թողեն այնտեղ և իրենք նաև մողովի՝ խորհուրդների վերընտրության մասնան ժողովի՝ խորհուրդների վերընտրության մասնանցելու։

Իսկ փոքրիկներին դուք զբաղեցրեք—խաղեր սարքեցեք, նկարներ ցույց տվեք, գրքույկներ կարդացեք և այնպիսի հետաքրքիր զբաղմունքներ կազմեցեք, վոր փոքրիկները չձանձրանան և իրենց մամանների յետեկից լաց շինեն։ Դրանով դուք մեծ ոգնություն ցույց տված կլինեք վերընտրություններին։

Լովազույն կալխոզնիկներին, հարվածային բանվարկութեան ներին—խորհուրդ։
Կազմեցեք ձեր նախարար։

Յերեխաններ, ձեզ հարկավո՞ր են Հրապարակներ, ժառարաններ, մանկասենյակներ, զբաղարաններ և այլն։

— Այո՛, շատ հայրավոր են։

Կազմեցեք ձեր հակազը գյուղխորհրդին կամ քաղաքարդին և այդ հակազի մեջ դրեցեք ձեր բոլոր պահանջները։

ՆՈՐ ԿԵՆՑԱՂ ՅԵՎ ԱՌՈՂՉԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր քառակարգային թշնամիները և նրանց դործակիցներն աշխատում են ներս խցկվել խորհուրդ և աշխատանքը խանգարել:

Դրանք ոսցիս լինմ կառուցող լանջորների և դյուզացիների ամենակատաղի թշնամիներն են:

Աչալուրջ հետեւեցեք, վոր այդ թշնամիները խորհուրդ չմտնեն:

Նոր խորհուրդը շատ-շատ անելիքներ ունի: Պետք է ընտրել մեր շինարարության համար ամենահարգվածային տեմպով աշխատող մարտիկներին:

— Աժանդակեցեք քաղխորհուրդի ընտրությունների կամպանիային:

ԱՅԱՋԱՐԻԱԽԹՅՈՒՆ

Յանոթացեք ձեր քաղաքի սանիտարական վիճակին:

1. Ի՞նչ դըռության մեջ են՝ փողոցների և բակերի մաքրության դործը, խմելու ջուրը, բաղնիքները, կոյուղին, ջրմուղը, հասարակական այգիները և հրապարակները:

2. Քաղխորհուրդի սահսելցիայից իմացեք՝ ի՞նչ միջոցներ են դործադրում քաղաքի սանիտարական դըռությունը բարելավելու համար:

3. Ի՞նչ վարակիչ հիմանդրություններ են հաճախ տարածվում ձեր քաղաքում և ոլայքարի ի՞նչ միջոցներ են դործադրում սահսելցիայի կողմից:

4. Ծրադրեցեք ձեր սժանդակությունը և հաժամայնեցրեք սահսելցիայի հետ:

5. Հետեւեցեք ձեր և հարեվան բակերի մաքրությանը:

6. Սահմանացեք ահճնական առողջապահության կանոնները և խիստ կերպով հետեւեցեք. (առանձին անկողին, ուտել առսնձին ամանից, պարագել մարմնամարդությամբ, բժշկի խորհրդով չփել մարմինը սառը ջրով և այլն):

7. Մահեցեք դասարանի համար առողջապահիկ կանոններ:

8. Մինչեւ հիմա ի՞նչ և արել ձեր սանիտ խմբակը և դեռ ի՞նչ ունի անելու:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱհՈՒԹՅԱՆ ՎՈՐԾ
ՄԵԳԱՆՈՒՄ**

Մինչեւ Խորհրդային իշխանության հասատովելը ժողովրդի առողջության մասին համարյա մտածող չկար: Այժմ արդեն այդ դործը գրված է լավ հիմքերի վրա. նախ՝ բոլոր հիմանդանոցներն ու դեղատները պատկանում են պետությանը, ապա մեծ ուշադրություն ե դարձրած գավառական ու գյուղական բժիշկներ ունենալու վրա:

Մեր կտուավարությունը ձգտում է ժողովրդի մեջ այնպիսի առողջապահական սպայմաններ ստեղծել, վոր հիմանդրությունների առաջն առնվիլ. այդ նպատակով աշխատում են թե՝ դյուզերը և թե՝ քաղաքներն առողջապահական դրության մեջ դնել, առողջ ու լավ անողի հնարավորություններ ստեղծել, տարաբուխիկ հիմանդրությունների առարածման առաջն առնել:

— Բժշկական ի՞նչ հիմնարկներ դիմեք, և ամեն մեկը նրանց ի՞նչ դործ և կատարում:

1. Ի՞նչ գեղեց ունեք ձեր դասարանական դեղատանք՝
2. Ի՞նչ դեպքերում եք վործ ածում այդ դեղերը:
3. Մշակեցեք ասածին ուղղության կանոններ:
4. Սովորեցեք—ի՞նչպես կարելի յն բժիշկ կանչել, հիմարդին հիմանդրանոց ուղարկել, դեղատանք դեղ պատվիրել և ստունալ:
5. Ի՞նչպես և աշխատում ձեր սանիտարական սեկցիան:

— (Կարդացեք «Բնութ. և աշխ.», յերես 95 և 96):

Այս նյութը վերջացնելուց հետո ներկայացրեք «Կեցե առողջապահությունը» փոքրիկ պիեսը, վոր կզտնեք 1925 թվի «Գիոներ» № 2—3-ի 9 յերեսում:

Պահպաննենք մեր աչքերը

1.

Ո՞վ չի մեղանից տանջվում, յերբ պատահում և կույր մարդու: Մի հասակավորի հարցնես, կասի՝ ասոված և արել: Իսկ թե հարցնես՝ չե՞ վոր նրանք մեծ մասսամբ փոքր հասակում են կուրացել, ինչո՞վ եյին մեղալոր: Առանց հասկանալու իսկական պատճառիները, մի բան ել կպատասխանեն, թե՝ ծնողների մեղքն և իրանց վրա թափել, կամ մի ուրիշ բան:

Բայց յեթե մենք քննենք—կտեսնենք, վոր մեզ մոտ ամեն մի հիմանդրության, ինչպես և կուրության պատճառը դլխավորապես մեր ծնողների և մեր տղիություններ, մեր՝ առողջապահական կանոններ չիմանալը:

Մեզանից և վոչ մեկը վայրկյան անդամ չպիտի մոռանա այս ձմբարությունը.

Հազար անդամ հեշտ է հիմանդրությունից, վարակումից պաշտպանութելը, քան հիմանդրանուց հետո բժիշկությունից պաշտպանությունից էլուստը:

2.

Ինչի՞ց ե առաջանում տրախոման—աչքի այս վատ հիմանդրությունը, վոր սովորաբար վերջանում է կուրությամբ.—

— Միայն և միմիայն մեր աչքերը կեղառու պահելուց և վարակումից չպաշտպանությունը: Իսկ ի՞նչ և հարցուց և վարակումից չիմանդրանությունը համար:— Շատ կավոր տրախոմայութեալ չիմանդրանություն՝

ա) չողովել ուրիշի յերեսսրբիչով,

բ) ունենալ առանձին բարձ,

գ) չրացվել միենույն ամանի ջրով,

դ) կեղառու ձեռքերով չտրորել աչքերը:

Սրանք շատ չնշին, հասարակ բաներ են, բայց մենք շատ անդամ մոռացության ենք տալիս, կամ բանի տեղ չենք դնում. իսկ վերջը՝ անդառնալի կորուստ ունենում—կուրություն:

3.

Ծաղիկն ել շատ վտանգավոր և վարակիչ հիմանդրություն ե:

Նրա բժկությունը միմիայն «ծաղիկ ծեծելու» մեջ նշանակություն կամ կուրանում կամ միլիոն հիմանդրի ծծեծած յերեկ: Ծաղկով հիմանդրի մոտ յերեկ ծաղիկը ծեծած ե, ուզում խա չողետք ե լինի: Իսկ ում ծաղիկը ծեծած ե, ուզում կամ միլիոն հիմանդրի մոտ նստի, վոչինչ չի պատահածի:

Սրանից միքանի տարի առաջ միայն Ռուսաստանում ծաղկից մեռնում կամ կուրանում եյին կես միլիոն մարդ. պատկերացրեք—500,000 հոգի... և այս ել մեր մեր ծնողների տղիության պատճառով: Ինչքա՞ն կամ մեր ծնողների տղիության պատճառով: Յեշամ հեշտ է կես միլիոնը թղթի վրա դրելը. բայց յերբ հեշտ է կես միլիոնը թղթի վրա դրելը. բայց յերբ մատածում ես, վոր նրանցից ամեն մեկը յերեկի համար այնքան պետքական մարդիկ կլինեյին, սիրադ ցանքում ե ափսոսնքից...

Ուրեմն ի՞նչ և բոլորիս պարտականությունը այս և ուրիշ հիմանդրություններից աղատվելու համար:

111

Մաքրություն, մաքրություն, մաքրություն և ա-
ռողջապահական կանոններ իմանալը...

Իսկ դու համար հարկավոր ե կովել ծնողների
տղիտության դեմ. սովորեցնելու բացատրելն օրանց ա-
ռողջապահական կանոններ և վերջ տալ պառավական
խորհուրդները բանի տեղ դնելուն:

— Ձեր դասարանում բոլո՞րն ունեն ծաղկի վկայական:
— Ինչո՞ւ առանց ծաղկի վկայականի գպրոց չեն ընդունում:
— Գրեցեք լողունդներ—ի՞նչ պետք ե անենք, զոր մեր տչքնը
առողջ լինեն:

Այցելեցեք ձեր քաղաքի կուրանոցը:

— Մտածեցե՞ք—ի՞նչ հասարակական աշխատանք կարող է ք
տանել կուրանոցի և կույրերի համար:

Փոքրի դավադրություն

Աստղիկի քույրը՝ փոքրիկ Հասմիկը դեռ մեկ ամ-
սական չկար, վոր մայրը նրան կոնսուլտացիա տարավ: Աստղիկին ել հետք զնաց... ինչքա՞ն մայրեր, ինչքա՞ն
յերեխաներ կային: Յերբ հերթը հասավ իրենց, փոք-
րիկ Հասմիկին ել մերկացրին ու դրեցին փոքրիկ կշեռքի
մըա. կշռեցին՝ ուզիղ և կիլո յեղավ: Ապա չափեցին
հասակը: Բժշկուհին քննեց յերեխային, խորհուրդներ
տվեց ու նվիրեց «Մոր հուշատեր» փոքրիկ գրքույիը,
վորանդ գրքած եյին «վոսկե կանոններ» յերեխային
խնամելու համար: Դրանից հետո Աստղիկի մայրն ամեն
տմիսը մեկ անգամ յերեխային տանում եր կոնսուլտա-
ցիա, փորտեղ նորից կշռում եյին, հասակը չափում,
քննում առողջությունը և խորհուրդներ տալիս: Բայց
դրանից՝ բժշկուհին հաճախ հանդիպում եր նրանց տուն
և հետաքրքրվում, թե յերեխային ինչպե՞ս են պահում:

Մեկ անգամ դաս պատրաստելու համար Աստղիկը
զնաց իր ընկերուհի Սեղայենց տուն: Սրանք ել ունեյին
մի փոքրիկ յերեխա—ճիշտ Հասմիկի հասակի... Բայց
այնքա՞ն նիշար եր, այնպիսի հիվանդութեամբ ուներ,
վոր Աստղիկը շատ խղճաց:

— Ինչո՞ւ յե ձեր փոքրիկն այսպես վատառողջ, բա

կոնսուլտացիա չե՞ք տանում.—Հարցրեց Աստղիկը Սե-
ղայի մայրիկին:

— Վոր աստված ուղի, լավ կլինի ելի՛.—պատաս-
խանեց Սեղայի մայրը.—յերեկի մեր մեղքիցն ե, չոր
եսպես ե. յերկու փոքրիկ յերեխա յել ունեցել ենք, բայց
ելի եսպես եյին, մահացան... ո՞վ գիտի, գուցե սա յել
չապրի...

Աստղիկը պատմեց, թե ինչպես իրենց յերեխան
կոնսուլտացիա յեն տանում, ինչպես բժիշկը քննում,
խորհուրդներ ե տալիս և դեռ մեկմեկ ել իրենց տուն
այցելում:

Սեղայի մայրը հին հասկացողության տեր կին եղ
և բանի տեղ չերեց Աստղիկի ասածները:

Յերբ առանձին մնացին, Աստղիկը Սեղայի ական-
ջին մի բան փոփոաց: Սեղան ժպտաց ու գլխով համո-
ձայնության նշան արավ:

Մյուս որը Սեղայի մայրը զարմացել եր, վոր Սե-
ղան յերեխայի հետ գուրս եր յեկել յերեկոյան և եռ-
քան ժամանակ տուն չեր յեկել... Քիչ հետո տեսավ՝ ինչ-
պես Սեղան յերեխան գրկած, Աստղիկը և մեկ ել մի
անձանոթ կին ներս մտան:

Պարզվեց, վոր մորից թագուն Սեղան Աստղիկի հետ
յերեխան տարել ե կոնսուլտացիա: Բժշկուհին մեծ ու-
րախությամբ ընդունել ե նրանց, քննել ու հիմա յել
յեկել ե տուն, վոր խորհուրդներ տա:

Սեղայի մայրը մեկ ուղեց բարկանա, բայց յերբ
տեսավ՝ ինչպես բժշկուհին հոգատարությամբ խոսում
է փոքրիկ յերեխայի մասին, բացատրում, թե ինչպես
պետք ե խնամել, բարկությունն անցավ և սկսեց
բժշկուհուն լսել:

Անցել եր մի ամիս, և Սեղայի փոքրիկ յեղբայրն
առողջացել ու թմբլիկ յերեխա յեր դառել. —այնքա՞ն
ուրախ, այնքա՞ն աշխուժ, վոր ճանաչել չեր լինի...

Սեղան ու Աստղիկը հպարտ ու զոհ եյին իրենց ա-
րածով:

1. Զեռք բելեցեք «Մանուկների միտինդը» պլակատը: բա-
ցատրեցեք՝ իրավացիք յեն արդյոք յերեխաների պահանջները և
ինչո՞ւ:

2. Զեռք բարեցեք «Մոր հուշտետր» փոքրիկ դրքույկը. խորհութներից կարևորներն արտագրեցեք պլակատի վրա «Մանուկների միտինդ»-ի ձեռվկ:

3. «Մոր հուշտետր» գրքույկում դտե՛ք հետեւյալ հարցերի պատասխանը և արտագրեցեք ձեր շրջիկ տետրներում:

ա) Վո՞րպիսի մայրն ունի առողջ յերեխա:

բ) Ո՞վ ե մոր և մանկան բարեկամը:

շ) Ինչի՞ց են յերեխաներն ավելի շատ մահանում:

— Անպայման գնեցեք «Ինչպես պետք է պաշտպանել փոքր յերեխաներին հիվանդություններից» առողջապահական գրքույկը, վոր ձեր ընտանիքում միշտ ումենան ձեռքի տակ:

— Ծանոթացե՛ք վարակիչ հիվանդություններից պաշտպանվելու պարզ կանոններին. արտագրեցեք այդ կանոնները մի փոքրիկ տետրակում և պահեցեք ձեր դասարանական դեղատանը:

— Հարստացրեք ձեր դասարանի դեղատան դեղերը և մյուս պարագաները:

— Զեռք բերեք ձեր դասարանի համար «Առողջապահական հուշտետր» գրքույկը և ողտագործեցե՛ք այն, բացառությամբ 16-17 յերեխների:

Կարդացե՛ք «Բնութ. և աշխ.» յերես 108-110:

Ֆայրիկ խոհանոցը

Առաջին տպավորությունը—այդ ահագին ճաշասրահի մեջ հնչող հաղաբավոր պնակների, դղալների, գանակների, պատառաքաղների զբնդոցն ե, վորի մեջ անհետանում և մարդկային աղմուկի խուլ վորոտը:

Մի ճաշասրահ, վորն ունի 35.000 պնակի, տեղափորում ե միանգամից 12.000 ճաշողի, սպասարկում ե եղեկարումեխանիկական դավոդի և ծուրբինստրոյի 20 հազար բանվորներին: Յելնելով մեր Յերեվանի Բանկովի ճաշարանների փորձից՝ դու մտածում ես, թե այս ահագին բազմության մեջ ճաշ ստանալու համար առնվազն 3 ժամ պետք ե հերթ սպասես: Բայց վոչ: Յուրաքանչյուր բանվոր այստեղ 12 րոպեյի ընթացքում ճաշում, վերջացնում ե: Յուրաքանչյուրի ունի իր վորոշակը:

Ճաշը, յերեք տեսակ, արժե 29 կոպեկ: Իսկ բանվորների յերեխաները ճաշն ստանում են 8 կոպեկով:

Քնոհանուր ճաշասրահից մենք անցնում ենք դիյետական սեղանատուն, վորտեղ ճաշում են զանազան հիվանդություններ ունեցող բանվորները: Այստեղ տիրում ե չուք և կատարյալ մաքրություն: Սեղանները զարդարված են արեվադային զանազան բույսերով: Մեր բարձրաձայն հարցերին բժիշկը պատասխանում եր շշուկով և այլայլված: Վերջապես մենք նկատում ենք պատին փակցրած ահագին լողունգը: «Բացարձակ լողություն»: Բանվորներն իրոք վոր ճաշում են բացարձակ լողության մեջ:

Ճաշարանում մաքրության, չուքի և լողության հետ միասին իշխում ե սանհիտարական դիսցիպլինան:

Մեղ ուղեկցող բժիշկը, իր զործով վոգեվորված ու աշխույժ մի ընկեր, միակը չե ֆաբրիկ-խոհանոցում: Այնտեղ կա բժշկական հատուկ պերսոնալ, վոր գիշեր և ցերեկ հսկում ե կերակուրների վրա:

Ճաշարահներին կից կան հատուկ լվացատներ, ուր լվացվում են բանվորները ճաշի նստելուց առաջ: Լվացվելը պարտադիր է ճաշից առաջ:

— Իսկ ճաշից հետո՝ կամավոր, — ավելացնում ե բժիշկը կատակով:

Խոհանոցում 14 ահագին չոգեկաթսաների մեջ յեփվում են զանազան տեսակի կերակուրներ: Ամբողջ պրոցեսում են զանազան տեսակի կերակուրների շատ կան: Այնուհետեւ բժիշկը պատասխանում ե մեր մի շարք հարցերին և մենք սպիտակ խալաթները հանձնելով պահեստ՝ դուրս ենք գալիս ֆաբրիկ-խոհանոցից:

Այնուհետեւ բանվորների սնունդը դրված է հիանալի չիմքերի վրա:

— Ծանոթացեք բանվորապի ճաշարահների հետ:

— Հաշվի առեք որական ճաշողների թիվը, ուսումնասիրեք Ապքրությունը և արեք ձեր առաջարկները:

Որական կես ժամ

— Մեկ նայեցե՞ք, թե ինչ է անում այդ յերեխան, — սարսափած բացականչեց ամերիկացի մի գիտնական, ճաշարան մտնելով:

Հարեվանները զարմանքով նայեցին, բայց բան գլխի չընկան: Յերեխան նստել եր սեղանի առաջ և հանդիստ ձավարի քաշովի յեր ուտում:

— Վոչ, լավ նայեցե՞ք, — շարունակում եր գիտնականը:

Հարեվանները մնացին տարակուսանքի մեջ. նրանց կարծիքով յերեխայի արածն առանձնապես աչքի ընկնող մի բան չեր. իր համար քաշովի յեր ուտում, ուրիշ վոչինչ:

Գիտնականը վերջապես իրեն չկարողացավ դողել ու դարձավ յերեխային. —

— Կուղեյի իմանալ, սիրելիս, այդ ի՞նչ ես անում:

— Չեք տեսնո՞ւմ, ինչ ե: Քաշովի յեմ ուտում:

— Բայց ախր դու բոլորովին չե՞ս ծամում:

Յերեխայի ծիծաղն յեկավ:

— Ինչու ծամեմ: Առանց այդ ել կակուղ ե:

— Վոչի՞նչ, կակուղ ե: Բայց կերակուրը միայն նրան համար չե՞ն ծամում, վոր կոշտը կակուղ դարձնեն: Ինչ կերակուր ել լինի, պետք ե լավ ծամել: Մեր բերանի թուքը ծամելու ժամանակ փոփոխության ե յնթարկում կերակուրները: Արագ կուլ տված ու թքով չփոփոխված կերակուրը յեթե ընկնի ստամոքսը և ապա աղիքները, նա լավ չի մարսվի, և դեռ ստամոքսի հիվանդություն կառաջացնի: Քո քաշովին զուր կանցնի:

Յերեխան հուզմունքով նայում եր գիտնականին:

— Որական քանի՞ անդամ ես ուտում, — հարցրեց գիտնականը:

— Ինչպես վոր պատահում ե. որ ե լինում՝ տասն անդամ:

— Այս, տեսնո՞մ ես, ելի գունատ ես ու նիհար. ուրեմն կերակրի միայն շատ չնչին մասն ե գնում քո մարմին սնունդ տալու:

— Զմոռանաս այս որենքը — վորքոն շտո ծամես ին-

բակուրը, այնքան լավ: Լավ ե ծամած մի կտոր սև հացը, քան թե անկանոն կերած համեղ ճաշը:

Առողջ ու կուշտ լինելու համար շատ քիչ կերակուր և հարկավոր, և որական ընդամենը կես ժամ ե պետք ուտելու համար:

— Դուք ինչպես եք ուտում ու ծամում:

— Հետեւեցե՞ք հողվածում հիշված գիտնականի խորհուրդներին:

— Ձեր առողջապահական հանձնաժողովին հանձնարարեցե՞ք մզակել ուտելու առողջապահության կանոններ, առանձին պլանատիվ վրա դրել կամ նկարել, ու կախեցեք ձեր դասարանում:

— Կարդացեք այս հողվածը ձեր ընտանիքում:

Թաղաքի և գյուղի կուլտուրական կյանքը

Ընկեր Լենինի «սովորի՛ր, սովորի՛ր, սովորի՛ր» պատգամը բոլորին ե գրավում: Բոլորն ել ձգտում են սովորել:

Այդ ե պատճառը, վոր որեցոր աճում են քաղաքի կուլտուրական հիմնարկները. բազմաթիվ կինոներ, ակումբներ, թատրոն, գրադարան-ընթերցարան, թանգարան... և բոլորն ել միշտ լիքն են մարդկանցով:

Յերեկվա անգրագետ բանվորներն այսոր բանֆակի ուսանողներ են, մեծահասակների գիշերային դպրոցներն են հաճախում. կանայք ել յետ չեն մնում: Նրանք շտա լավ հիշում են իլյիչի խոսքերը. «Ամենավերջին խոհարարն անդամ պետք ե սովորի, վոր կարողանա կտուավարել յերեկիրը»:

Քաղաքի բազմաթիվ դպրոցներն աշխատում են առավոտները և յերեկոները: Բոլորն ել հասկացել են, վոր սոցիալիզմի կառուցման համար հարկավոր ե ուսում, հարկավոր ե յերկրի կուլտուրան բաձրացնել:

Պյուղն ել ե հսկա քոյլերով առաջ գնում: Այսոր վառ մեր գյուղը ել հինը չի: Աճում են կուլտուրական հիմնարկները, յեռապատկվել և քառապատկվել ե գողրոցների թիվը: Ամեն գյուղ ունի իր խրձիթ-ըն-

թերցարանը, կարմիր անկյունը: Անդրադիտության վերացման գործն ուժեղ թափով առաջ ե զնում:

Գյուղը հաստատ քայլերով բռնել և սոցիալիզմի ճամբան:

Փոշիացած և անհատ տնտեսությունները վերանում և տեղ են տալիս կոլեկտիվ տնտեսություններին: Գյուղը զնում է քաղաքի հետ համընթաց քայլերով: Սոցիալիզմի կառուցման գործն ապահովված է գյուղում:

Մեծ ջանքեր են թափվում նաև քաղաքի ու գյուղի սանիտարական վիճակի բարեկարգման գործում: Առողջապահության խնդիրները բոլորի ուշադրության առարկան են դարձել:

Մասնավորապես հոգ ե. տարվում յերեխաների առողջության վրա. նրանց համար կազմակերպվում են ֆիզկուլտափառատանքներ: Այդ գործում մեծ դեր են խողում պիոներները:

Ընդհանրապես պիոներների հասարակական աշխատանքները մեծ են: Մեր կուլտուրական շինարարության գործում կոմսոմոլն ու պիոները առաջին շարքերումն են: Նրանք իրենց հետեւից տանում են նոր սերընդի չկազմակերպված հոծ մասսան:

1. Այցելեցե՛ք ձեր քաղաքի կուլտուրական հիմնարկները և հետաքրքրվեցեք նրանց աշխատանքներով (ակումբ, կինո, թատրոն, դպրոցներ, թանգարաններ, գրադարան և այլն):

2. Ի՞նչպիսի դպրոցներ կան ձեր քաղաքում ըստ տիպի և ըստ աղբության. կազմեցեք դիագրամներ:

3. Կազմեցեք դիագրամներ քաղաքի աշտկերտության մասին՝ ըստ սեպի, ըստ սոցիալական գրության և ըստ աղքության:

4. Կուլտուրական հիմնարկները բանվորների հաճախում համար ի՞նչ դյուրություններ են ստեղծում:

5. Ի՞նչպես ե կազմակերպված այդ հիմնարկներում բանվորների հանդսաի, զվարճության և կուլտուրական պահանջները բարարելու գործը:

7. Ծրագրեցեք՝ ի՞նչ աշխատանք կարող եք տանել այդ հիմնարկներում. մշտական կազ ստեղծեք դրանցից վորեւ մեկի հետ:

8. Ծրագրեցեք՝ քաղաքի սանիտարական դրություններ ուսումնառությունը համար ի՞նչ եքսկուզիաներ պետք ե կառաքեք:

9. Ի՞նչ հիմնարկներ կան քաղաքում, վոր ոժանդակում են քաղաքի բնակչության առողջապահության գործին. ծանոթացնեք նրանդ աշխատանքներին:

10. Ծրագրեցեք՝ դուք ի՞նչ եք անելու բնակչությամ, դպրություն և քաղաքում բնակչության առողջապահության դործին սժանդակելու համար:

11. Քաղաքի կենցաղը բարեկալելու գործում ի՞նչ ժամանակագույններն են ցույց տալիս պիոներները, կոմյերիտները:

12. Ի՞նչ աշխատանքներ են կատարում պիոներները դրանում:

13. Մասածեցեք, ինչո՞վ կարող եք սժանդակել դժուռիկ և քաղաքի կուլտուրական հիմնարկներին:

ԱՌԱՋԱԴՐԱՅԻԹՅՈՒՆ

— Ձեր քաղաքում կա՞ «Գյուղացու տուն»: — Ծանոթացնեք նրա աշխատանքներին:

— Ի՞նչ պայմաններով են դյուրությունները, նրանց սայլերն ու անառունները տեղակորվում «Գյուղացու տանը»:

— Ուսումնասիրել — ի՞նչ բաժիններ օմնի «Գյուղացու տանը» (ննջարան, դրադարան-ընթերցարան, կաբանուն, թատերաբահ, գոմ և այլն) և ի՞նչպես ե գործը կազմակերպված այդ բաժիններում:

— Հետաքրքրվել — վերջին ամսում ովքե՞ր են յնդել «Գյուղացու տան» հաճախորդներն ու քանի՞ հոգի:

— Ի՞նչ կուլտ-կրթական աշխատանքներ են տարվում:

— Ինչպե՞ս ե դրված դյուրությունների հանդսառաջու և խելացի դիմումության դործը:

— Ի՞նչ նշանակություն ունի «Գյուղացու տանը» քաղաքի և գյուղի կապի խնդրում:

— Ծրագրեցեք՝ ինչո՞վ կարող եք սժանդակել «Գյուղացու տան» աշխատանքներին. այդ մասին համաձայնության յեկեք «Գյուղացու տան» վարչության հետ և աշխատեցեք, վոր ձեք կազմը լինի մշտական և վոչ պատահական:

Բատրակի նամակը գյուղացու տան վարիչին

Հնկե՛ր վարիչ, մոտ մի ամիս ե, ինչ հեռացել եմ «Գյուղացու տնից» և չեմ կարողանում մոռանալ իմ այդտեղ անցկացրած կյանքը։ Մի շաբաթ ընդամենը մասցի այդտեղ, բայց ինչքա՞ն բան տեսա, ինչքա՞ն բան սովորեցի։ Զեր ննջարանում յես սովորեցի մաքրություն, ձեր գոմում՝ անասունները պահել, ձեր ակում-քում՝ թե ինչպես պետք է կազմակերպել խրճիթ-ընթերցարանի աշխատանքները։ Իսկ ձեզ մոտ իմ լսած դասախոսությունները— անասնապահության, հողագործության մեր նոր կյանքի մասին—ինձ նոր մարդ դարձրին։

«Դյուղացու տունը» միայն կարող եր աղատել աշխատավոր գյուղացուն քաղաքի դինետիներից, կեղտոտ իշխաններից։ Կեցցե Խորհրդային իշխանությունը, վոր մեղ աղատեց ցարի ու տղիտության լծից և տվեց շատ բարիքների հետ նաև «Գյուղացու տուն»։

Խնդրում ենք այս նամակը գրեք ձեր պատի թերթում։

25 հունիսի 1931թ.

Յեղվարդ

Բատրակ ՀԱՄԱ

Սյս ձեվով գտւք ել գրեցե՛ք նամակներ՝ զանազան բովանդակությամբ և դանազան տեղերից։

Բանվորունու յերգը

Կա՛րի, կա՛րի, իմ մեքենա,
Կարի արագ, անդադրում,
Կտորները ձեված-պատրաստ
Այնեղ քեզ են սպասում։

Երեվում ե՝ շատ ես հոգնել.
Ազուլ, անվերջ պահանջաց,

Բայց իմացի՛ր, վոր մեր յերկրում,
Աշխատողն ե լոկ ապրում։

Մեր աբտելը մի մարդու պես,
Աշխատում ե թե ի թե,
Զա՛ն, մեքենա, հասկանո՞ւմ ես,
Ի՞նչ լավ բան ե կոլեկտիվ։

Դե՛, շուտ կարի, իմ մեքենա,
Մանր, խնամքով ու սիրուն.
Աշխատանքի վորակը մեր
Բարձրացնել ենք մենք ուզում։

Են առաջ եր, վոր կինն անբան,
Ուղեղը խոր քնի մեջ,
Անցնում եյին որերն իզուր՝
Փակված տան չորս պատի մեջ։

Խորհրդային յերկրում կարմիր
Կինն աղատ, աշխատող,
Աշխատանքը թեե ծանր ե,
Բայց տանում ե նա սիրով։

Կարի, կարի իմ մեքենա,
Կարի շատապ, անդադրում,
Մի դանդաղի, մի ծուլանա,
Գործը քեզ ե սպասում։

Զերքեղուհիների արտելը

Այսոր Ենդժիյ առվի կանանց համար մեծ ուրախություն ե, նրանք իրենց արտելի յերրորդ տարին են տաճաւմ։

Արտել կազմակերպողը մի չերքեղ-բատրակուհի յեր։ Սուշ նու ծառայում եր կուլակի մոտ։ Կոմյերիս շարքերը մտնելու համար՝ կուլակը նրան հեռացնում ե։ Բատրակուհին հավաքում ե իր մի քանի ընկերուհիներին և կազմակերպում առվում առաջին արտելը։

Սկզբում նրանք 8 հոգի եյին։ Իրենց մեջ հավա-

քած մի փոքր գումարով նրանք բայց արին մի փոքրէն արհեստանոց և ձեռք բերին յերեք դաղդյահ:

Այժմ արտելը բավական մեծացել է. գործ շատ ունի: Իր պատրաստած բաշլիկները և այծենակաճը (բութկաները) տալիս են տեղական կոոպերատիվին, վորից և ստանում են արժան գնով բուրդ:

Ներկայումս արհեստանոցում աշխատում են 23 կեն:

Տեղացիները այդ արտելը կոչում են «յեթիմ», վորովհետև արտելի անդամները վորը բատրակուհիներ և այրի կանայք են:

Յերեկոները արտելի անդամները զբաղվում են կուլտ-կրթական աշխատանքով: Մի տարի առաջ արտելում կային միայն յերեք հոգի գրադետ: Իսկ այժմ առաջնքը գրադետ են. գիտեն իրենց մայրենի լեզվով գրել և կարդալ: Այս ամառ արտելը նպաստեց, վոր առւլում 13 յերեխանների համար մանկամասուր բացվի, վոր անդամուհիները հերթով հերթապահություն անեն մանկամասուրում:

Կորչի չաղրան

Հոկտեմբերի 11-րդ տարեղարձն եր:

Ժամի 10-ին հավաքվեցինք ակումբը:

Անսովոր կենդանություն եր տիրում. չաղրանների մեջ փաթաթված թրքուհիները խոսում, վիճում եյին: Տրամադրությունը տոնական եր:

Ներս մտավ կին-հրահանդչուհին: Ժամանով բարեկեց բոլորին և բեմ բարձրացավ:

— Ընկերներ, — սկսեց հրահանդչուհին:

Տիրեց խորին լուսություն: Բոլորի աչքերը սեվեռդեցին ճառախոսի վրա: Նա խոսում եր խոր համոզումով: Խողիներին վարակում եր իր վողեվորությամբ: Խոսում եր Հոկտեմբերի նվաճումների մասին, նոր կենցաղի մասին:

— «... Չաղրան ծածկում են աշխարհը մեր հայացքը. չաղրան տգիտության նշանն են: Կրօնը չի ուղարկ, վոր մենք լույս աշխարհ տեսնենք. որտ համար նա ծած-

կել են մեր աչքերը: — Չաղրան խավարի նշանն են: Ներսում մեզ բանտարկել եյին հարեմի պատերի մեջ: Այդ գեռ բավական չեք: Դրսումն ել ուղում եյին մեզ չաղրայի մեջ բանտարկել: — Չաղրան ստրկության նշանն են: Հոկտեմբերը խորտակել են տգիտության և ստրկության բոլոր շղթաները: Կորչի չաղրան, տգիտության և ստրկության նշանը»: ...

— Կորչի, չաղրան, վորոտաց ամբողջ դահլիճը:

— Կորչի չաղրան, — գոռաց 60-ամյա Զեյնաբը կուն շպրտեց իր չաղրան:

Բուռն ծափահարություններից թնդաց դահլիճը:

Յեզ ներկա կանանցից շատերը հետեւեցին Զեյնաբի որինակին:

— Ի՞նչ բանի նշան ե չաղրան:

— Ի՞նչու յե կրօնը հովանավորությունները:

— Հին սովորություններից ո՞վեր եյին տռւժում կամ աշտվում — մոլաններն ու բեկերը, թե՞ աշխատավրությունը: Ի՞նչո՞ւ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ միջոցներով ե նորհ. իշխանությունը վերականգնում բանկորների և ծառայողների առողջությունը:

— Ի՞նչ սանատորիաներ, հանդստյան աներ, ամառանցներ ու բուժիչ ջրեր կան ձեր շրջանում. ցույց տվեք քարտեղի վրա:

Հանդստյան՝ տունը Ղարաքիլիսայում

Մի ծաղկավետ բուրաստան ե Ղարաքիլիսայի հանդստյան տունը:

Մանում ես լայն դռնից ու դիմացդ բացվում ե ծառապարդ հրապարակը:

Աջ կողմի վրա կառուցված են գեղեցիկ շենքեր:

Բարձրանում ես վայտյա աստիճաններով վերի հարկը: Մտնում ես մի ընդարձակ սրահ, վորտեղ որակած չորս անդամ ճաշ են անում աշխատանքից հոդնած բանդ վորներն ու չքափոր գյուղացիները — և հայ, և ոռու, և թուրք, և վրացի:

Ահա, ճաշում են նրանք դաշնամուրի յերաժշտության տակ:

Բոլորն ուրախ են. բոլորի յերեսին ժպիտ...

Մտնում ես ննջարանները: Մահակալներ՝ սենյակները մաքուր, փոշու հետք անդամ չի յերեվում, վոչ մի նպաստավոր պայման ճանձերի և այլ միջատների համար:

Անցնում ես տասնյակ ննջարաններ՝ մեկը մյուսից լուսավոր, մեկը մյուսից նախանձելի: Այստեղ կա ամեն հարմարություն և բարեխիղճ խնամք՝ բանվորի համար:

Ահա ակոմբը, կարմիր անկյունը, թերթեր ու ամսագրեր, շաշկի ու շախմատ, խաղում են, կարդում: Հպարտ են նրանք, վոր վայելում են իրենց աշխատանքի պառուղը:

Բարձրանում ես յերկրորդ և յերրորդ հարկերը, աշխիլի և ավելի գեղեցիկ, մաքուր և ողառատ:

Ամենավերջին հարկն իշխում է ամրողջ Դարաքիւմային և պարզում ե դեմք մի ինչ-վոր դյութիչ տեսքը:

Զբոսատեղերի կողքերին աստղանման ցրված են բաղմերանգ ծաղիկներ: Յուրաքանչյուրն իր տեղն ունի, յուրաքանչյուրը դասավորված է հմուտ պարտիզանի գեղարվեստական ճաշակով:

Ահա լողարանը՝ ընդարձակ ու ջինջ: Յեռում է կյանքը. կենդանություն ե: Հանգստի կարոտ պրոֆիլության անդամներից մոտ հիսուն հոգի լող են տալիս մանկական որախությամբ:

Կենսատու ջուրը քշում է նրանց հոգնածությունը և ներշնչում նոր թափ ու յեռանդ:

— Հետաքրքրվեցեք—այս և ուրիշ հանդստյան տներ, սանաւորիաներ առաջ ո՞ւմն եյին պատկանում և ո՞վքեր եյին հանդըսանում՝ իրենց ոռողջությունը վերականգնում:

Մեր կուրորտները

Հյուսիսային կովկասում կան նշանավոր կուրորտներ, —Պյատիկորսկ, Ժելեզնովոդսկ, Գարյաչեվոդսկ:

Եսսենտուկի և Կիսլովոդսկ: Վերջինն առանձնապես հպաչակված կուրորտ է: Այդտեղ ե զտալում «Նարզանի» ավազանը, վորը որեկան տասնյակ հազար դույլ նարզան և տալիս: Նարզանը մեծ քանակությամբ արտահանվում է վոչ միայն Խորհրդային Միության զանազան մասերը, այլ և արտասահման:

Մեծովյան ամբողջ շրջանը նույնպես կուրորտային վայր է: Մեր կուրորտները արտասահմանի կուրորտաներից յետ չեն մնում: Բայց վատ ճանապարհներն ու մի շարք այլ անհարմարություններ նրանց արժեքը գցում են: Առանձնատպես նշանավոր են Ղրիմի ծովափնյան կուրորտներն ու ամառանոցները, վորոնց մեջ աչքի յեւնկում Յալթան:

— Ի՞նչ կուրորտներ դիտեք մեր յերկրում:

— Թվեցեք, դրի առեք և ցույց տվեք քարտեղի վրա:

— Բայց նարզանից, ուրիշ ի՞նչ հանգային ջրեր դիտեք:

Բուժիչ ջուրը

Սարսափելի յերկրաշարժը մի գիշերված մեջ կործանեց լեռնականների առւլը: Ամեն ինչ կորցրած, սոված ու տանջված լեռնցիք հավաքված իրենց ավերակների շուրջը, դառն կերպով սգում եյին: Նրանք վախենում եյին նորից շինել իրենց խրճիթները քար ու քանդյեղած լեռան գագաթին և բնակություն հաստացնեն նրանից հեռու:

Այնտեղ, ուր առւլն եր գտնվում, մի աղբյուր քաջվեց: Ջուրը փոքրիկ շատրվանով վեր եր խիում և հավաքվելով լեռան ստորոտում, կազմում եր ձահիճ:

Լեռնցիք փորձեցին խմել այդ ջուրը. նա անդուրեկան համ ուներ, նրանից ծծումբի հոտ եր փչում: Փոքրացին ձուկ թողնել ջրի մեջ, և նա խկույն շունչը փշեց:

— Մեռած ջուր է, ասաց տիբրությամբ մի ծերուկ և գլուխը շարժեց:

Լեռնցիք յարեխաններին արգելում եյին այդ աղբյուրին մոտենալ և նրանից հեռու եյին քշում իրենց հոտերը:

Հյուսիսից անծանոթ ճանապարհորդներ յերկրաշարժի տեղը այցի յեկան։ Նայեցին նրանք և աղբյուրը. այդ անդուրեկան ջրից ել իրենց հետ մի քանի շիշ տարան։

Մի ժամանակ անցնելուց հետո մի ընկերություն լեռնեցիներին առաջարկեց այդ աղբյուրն իրենց վարձով տալ։ Չքավոր լեռնեցիք սիրով համաձայնեցին։

Աղբյուրի մոտ մի տուն շինվեց։ Այդ վատ համ ունեցող ծծմբային ջուրը շշերն եյին լցնում և ուղարկում զանազան քաղաքներ՝ վորպես դեղ։ Աղբյուրի մոտ սկսեցին հիվանդներ յերեվալ։ Գունատ, լղար մարդիկ մի քանի ամիս այդ ջուրվ բժշկվելով առողջանում եյին, չաղանում ու վարդագույն դառնում։

Աղբյուրի բուժիչ հատկության մասին ամեն տեղ լուր տարածվեց։ Հազարավոր հիվանդներ սկսեցին այդանու գնալ. նրանց համար շինում եյին տներ։ Շուտով արդեն փոքրիկ քաղաք կազմվեց աղբյուրի շուրջը իր հիվանդանոցով, հյուրանոցով և թատրոնով։ Քաղաքի շուրջը գեղեցիկ պարտեզ և զբոսավայր գցեցին։

Լերկ ու մուայլ լեռը կենդանացավ։ Լեռնցոց պատկանող հողի արժեքը բարձրացավ։

Հազարավոր հիվանդներ որհնում եյին այդ աղբյուրը, բնության այդ պարզեվը։

— Հա՛յր, ասաց մի անգամ ծերուկ լեռնցուն մի ջանել իգիթ. դու իզուր եյիր այն ժամանակ մեր աղբյուրի ջուրը մեռած համարում։ Այդ ջուրը հենց իսկական բուժիչ ջուրն ե։

Գյուղի աշակերտներից կազմակերպեցե՞ք «Հեքիմների գեմպայքարող» խմբակ և միասին ծրագրեցե՞ք այդ խմբակի անելիքը։

Գյուղի հեքիմը

ա.

Հեքիմ Համոն վաղուց եր մեր գյուղում։ Նա մի տղետ, ձախ աչքը չել մարդ եր, ու բոլորը նրան Շիլ Համոն եյին ասում։ Թե վո' բարեղից եր յեկել Համոն՝ այդ վոչվոք չգիտեր. իսկ թե վո' բարեղ եր սովորել նա իր հեքիմությունը՝ այդ ևս մեծ դադանիք եր։

Վոչ միայն վոչ վոք չուներ նա, այլև վոչինչ չուներ։ Նրա փոքրիկ տնակը զտնվում եր գյուղի ծայրին, ուր բացի իրենից վոչվոք չեր ապրում։

Ամառը նա խոտեր և զանազան արմտիք եր հավաքում ու չորացնում՝ նրանցից դեղեր պատրաստելու համար։ Ճիշտ ե, նա յերեմն մարդկանց ու յերեխանների ել եր բժշկում, բայց նրա արհետն անասնաբուժությունն եր։

բ.

Գարնան սկզբին եր։ Թաթոս ապնի յեղներից յերեքը հիվանդացել եյին. քոր եր թե քոս՝ ինքը չգիտեր։ Միայն խեղճ անսառններն անդադար քոր եյին անում, քսվում մսուրներին, սյուներին, կճղակներով իրենց քազը վեր անում ու նույնիսկ կաշին պոկում, արյունութամ։

Հեքիմ Համոն մի յերկու անդամ յեկել, ինչ-վոք մի բույսի արմատ եր յեկել ու ջրով քսել յեղներին, բայց հիվանդությունը չեր անցնում։ Յեղներն ավելի եյին քորում, նիհարում ու կեր ել չեյին ուտում։

գ.

Մի որ թաթոս ապին տանը նստած մտածում եր իր յեղների մասին։

Ո՛վ գիտե՝ ինչքան ժամանակ նա կմնար այդպես մտքի ծովն ընկած, յեթե դուն ձայնը նրան չսթափեցներ։ Ներս մտնող հեքիմ Համոն եր։ Նա կսմաց բարեվեց և իր քաղցած հայացքով նայեց ծերունուն։

— Ինչ լավ արիր, վոր յեկար, — ասաց թաթոսը. —

ո՞վ գիտե՞՝ միտքս ինձ ուր կտաներ... մի քիչ խոռնեց։
ախր յեղներս քանի զնում՝ վատանում են։

— թե վոր քսածո դեղը չի ոզնում, են ժամանակ
մի ուրիշ բան կա—են անենք—դաղենք։

Այդ ժամանակ Մարոն—Թաթոսի աղջիկը—նորից
թևած հացը խոնչով ներս բերեց։ Նոր հացի հոտը բանեց
տունը և Համոյի ախորժակն ավելի գրգռվեց։

— Լավ, յես կրակը վառեմ, շամփուրները կրտիր
զնեմ մինչև նրանց տաքանալը մենք ել մի բան կու-
տենք, հետո կդաղենք։

Դ.

Կշտանալուց հետո յեղները դուրս բերին ու թոկե-
րով դունչներն ու յեղջյուրները պինդ—պինդ կապեցին
սյուներից, վոր դաղելիս չկարողանան շարժվել։ Առ
յերր հեքիմ Համոն շիկացած շամփուրը ձեռքին այրում
եր յեղների հիվանդ մորթին, ու յեղճերահոտը տարածվել
եր շուրջը, հանկարծ թաթոսի բակը մի ձիավոր մտավ։
առ տեսնելով այդ բժշկությունը՝ աղաղակեց բարձրա-
ձայն։

— Ի՞նչ եք անում. այդ վայրենություն ե։

Հեքիմն ու թաթոսը շուռ յեկան ու տեսան քաղա-
քից յեկած մի անծանոթ մարդու։

Դա անասնաբույժ Ավետիքյանն եր, վոր զնում եր
Սարաշեն գյուղը, բայց արդեն մութն եր, ու գյուղինոր-
հրդի նախադաշն ուղարկել եր թաթոս ապօր տունը՝
գիշերելու։

— Ի՞նչ բանի յեք, —ասաց անասնաբույժը ձիուց
իջնելով և մոտենալով նրանց։

— Դաղում ենք, վոր քոսը բժշկվի, —հանցակորի
ձայնով ասաց թաթոսը։

— Քո՞նն են յեղները։

— Այո՛, իմն են։

— Ապա ո՞վ ե սովորեցրել ձեզ այդ բժշկությունը,
—զայրացած հարցրեց բժիշկը՝ դիտելով խեղճ տնա-
սունների կաշին ու բերանների կապը։

— Ա՛յ, ես մեր հեքիմն ե սովորեցրել, —ցույց տվեց
թաթոսը Համոյին։

— Հա՞ , յես դրան ցույց կտամ. թող սպասի։

Ապա պատվիրեց յեղներին արձակել և ջոկ գոմում.
կապել։

Այնուհետև անասնաբույժն խմանալով, վոր դյու-
ղում ուրիշ անասուններ ել կան քոսով հիվանդ, վորո-
շեց հաջորդ որն այդ գյուղում մնալ։ Կանչեց գյուղխոր-
հրդի նախադաշն, նրա միջոցով պատվիրեց, վոր վաղն
առավոտյան բոլորն իրենց հիվանդ անասունները գյու-
ղից կուրս գտնվող դատարկ, ընդարձակ մարդներից
մելը տանեն։

Հաջորդ որը մեկն իր կովը բերեց, մյուսը՝ հորթը,
յերբորդը՝ ձին, ու թժիշկը մեկ-մեկ 150 անասուն քըն-
յելով՝ տեսավ, վոր դըմնք վարակված են քոսով։ Պատ-
վիրեց այդ անասունները տեղավորեն մարդներում,
մեծ կաթսաններով ջուր յեռացնել տվեց, բոլոր անա-
սուններին լողացնել տվեց։ Ապա ծծումբով ինչ-վոր դեղ
պատրաստեց, քսեց անասուններին և կարգադրեց, վոր
առանձնացրած պահեն և յերեք որից հետո նորից լո-
ղացնեն, նորից դեղ քսեն, ու նորից լողացնեն, այսպի-
սով 7—8 որից հետո անասունները կլուծկվեն։

Այնուհետև իրաջրի հետ սուլեմա խառնեց ու պատ-
վիրեց՝ բոլոր հիվանդ անասունների զմմերը լվանան,
մաքրեն այդ լուծվածքով։

Այս դեպքից հետո, հեքիմ Համոյի վարկն ընկավ։
Թաթոսը բոլորին պատմեց նրա արածները և թժիշկ Ա-
վետիքյանի պատմածները հեքիմների ու նրանց գոր-
ծերի մասին։

Գյուղական ժողովը յերկար աղմկեց. ամենքն ել
համոզվեցին, վոր հեքիմը շարունակ խարել և իրենց.
ամեն մեկը մի որինակ եր բերում Համոյի «քաջակոր-
ծություններից»։ Վերջը վճռեցին Համոյին դուրս անել
գյուղից։

— Անասունների ի՞նչ հիվանդություններ դիտեք։

— Զեր այցելած գյուղն ունի՞ անասնաբույժ։

— Հեքիմներին բանի տեղ զնո՞ւմ են։

— Հեքիմների դեմ տարեք հասուկ ադիտացիա։

Ի. Վ. Ստալին (Զուղաշվիլի)

Իսրայելի վիսարիոնովիչ Ստալինը (Զուղաշվիլին) ծնվել է 1879 թ. Գորի քաղաքում (Վրաստանում): Նրա Հայրը բանվոր էր և աշխատում էր Թիֆլիսում՝ Ադելիանովի կոշկենինի գործարանում:



Ի. Վ. Ստալին (Զուղաշվիլի)

Ստալինը սովորում էր Թիֆլիսում և աշակերտ ժամանակացում էր հեղափոխական խմբակների աշխատանքներին: 1898 թ. ընկեր Ստալինը ընդունվում է Ռուսականի սոց.-դեմ. բանվորական կուսակցության մեջ:

Մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկ. Ստալինը բազմաթիվ անգամ ըանապարկված է յեղել և աքսորված: Այդ ժամանակամիջոցում նա գաղտնի աշխատանքներ և տանում դանազան քաղաքներում—Թիֆլիս, Բաთու, Պետերբուրգ (Լենինգրադ): 1917 թ. փետրվարյան հեղափոխության ժամանակ նա աքսորվում էր: Աքսորից ազատվելուց հետո Ստալինը վերադառնում է Պետերբուրգ և մասնակցում է կուսակցական դեկավորդ աշխատանքներին, վորպես կենտկոմի անդամ:

1917 թվից մինչեւ 1923 թիվը Ստալինը յեղել է
130

ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար: 1923 թվից ընտրվում է Կուսակցության Կենտկոմի քարտուղար, և այդ պաշտոնումն է մինչեւ այսոր: 1925 թվից նա Կոմինտերնի նախագահության անդամ է:

Քաղաքացիական կոփիլներին ընկ. Ստալինը մասնակցել է բոլոր Փրոնտներում՝ թե Վրանգելի, Յուդենիչի դեմ և թե Յարիցինի պաշտպանությանը:

Նա պարզեվարված է մի քանի շքանշաններով՝ կարծիր դրոշի, Լենինի անվան և այլն:

Ստալինը՝ Լենինի հետեւլողական աշակերտն է: Իբրև լենինիստ, նու անինա կերպով պայքարել է բոլոր թեքումների դեմ—տրոցկիզմի, աջերի և «ձախերի»: Կուսակցությունը նրա փորձված զեկավարությամբ միշտ ել հաղթանակով է դուրս յեկել սոցիալիստական շինուարության դժվարություններից:

Ա. Ա. ԶԱՐՈՒԽՅԱՆ

Գրիբ քո համառոտ կենսագրությունը:

1. Գրելուց առաջ քո կյանքը լրջանների բաժանիք և հաջորդաբար կապակցվում է նոր շրջանին անցնելիս՝ սկսիր նոր տօղիք (տողի խորքից):

2. Գրիբ պարզ, հոսկանալի և կարճ իսուքերով (մի քանի բարեկացած):

3. Յուրաքանչյուր ամբողջական խոսքից հետո դիբ վերջակատ: առհասարակ ոչափբություն դարձրու կենսագրության:



VI. ԺԱՆՈԹԱՆԱՆՔ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՐԱԳՐԻ ՀԵՏ

ՀՆԳԱՄՅԱԿԲ ԱՐՃԱԿՈՒՐԴ ՀՈՒՆԻ

Հնգամյակի այս յերրորդ տարին ունի 360 բանվորական որ: Յերրորդ վճռական տարվա ամեն մի որն ունի իր արդիքինապլանը: (արդարությունաբերական, Փինֆինանսական-փողային):

Ամեն մի գործարանում, ամեն մի Փարբիկայում հայտնի յե, թե քանի՞ մեքենա, քանի՞ ստանոկ, քանի՞ մետր չիթ, քանի՞ կտոր սապոն պիտի արտադրեն մի բանվորական որում:

«Կարմիր Պուտիլովեց» գործարանի տրակտորային յեխը 1931 թ. կոլխոզներին և սովորություններին պիտի տա 32.000 տրակտոր: Բաժանենք այս թիվը 360 որվա վրա: Ամեն մի որ ուրեմն, «Կարմիր Պուտիլովեց» պիտի արտադրի 89 տրակտոր: 89 տրակտորը—դա ամեն որվա արդինալլանն է տրակտորային յեխի համար: Ամբողջ տարին «Կարմիր Պուտիլովեցում» կռիվ և գնում այդ 32000 տրակտորի համար:

Այսպես ել Բագվի և Գրոզնու բանվորները գետնի խորքերից որական պիտի արտադրեն 80.000 տոնն նորվիթ: Դոնբասի բանվորներն ամեն որ շոգենավերին, յերկաթուղայիններին, գործարաններին պիտի տան 160.000 տոնն ածուխ:

Շաքարի գործարանների բանվորներն ամեն որ պիտի արտադրեն 46.600 յենտներ շաքար: Մենք ամեն որ պիտի կռիվնք արդինալլանի համար: Բանվորները և կռիվովները ամառն ել մեղնից ոգնություն են սպասում:

Շատերը ձեզնից կանեն. ամառը յեկալ, ուրեմն պիտի հանդսատանանք: Դրանք չեն հասկանում, վոր՝

ՀԵԳԱՄՅԱԿՆ ԱՐՁԱԿԱԽԻՐԴ ԶՈՒՆԻ.

Ամառը ես մեծ թափով պիտի կռվենք գործալքողների վեմ, աշխորյակներ պիտի կազմակերպենք, պիտի սովորեցնենք անդրագետներին, պիտի կռվենք վառելի-

քի ելեկտրականության խնայողաբար գործածության համար:

Տեղեկանք դիագրամների, զեկուցումների և աղյուսակների համար

1. Հնգամյա պլանով Հյուսիսային Կովկասում քանի՞ նոր Փարբիկ և գործարան պիտի կառուցվեն:

Կերոսին-բենզինի . . . 16 գործարան

Փայտի մշակման . . . 5 գործարան

Դաշտերի, այգիների, բանջարանոցների համար պարագանյութ և մորեխի, սուլֆիների և այլ վնասատուների գեմ կը վելու համար թունավոր հեղուկ և փոշի պատրաստող 23 գործարան:

Բուլա և յեղիպտացորենից գոշաբ պատրաստելու 4 գործարան:

Շաքարի գործարան 2 հատ:

II. 5-ամյա պլանով մեր յերկրամասի գործարաններն ու Փարբիկները պիտի յերեք անդամ ավելի մեքենաներ և այլ ապրանքներ արտադրեն, քան այդ յեղել և հնգամյակի սկզբում:

III. 5-ամյա պլանով ինչպես և փոխելու մեր գյուղատրնեկությունը:

Ինչպես պիտի փոխվի յուրաքանչյուր հարյուրյակը,

Յեթե 1927-28 յեղել և պլանով 1932-33 թ.

100 հեկտար զանազան ցանքս կլինի 135 հեկտար

100 հեկտար հացահատիկային ցանքս կլինի 150 հեկտար

100 ցենտ. մի հողամասից նույն հողամասից կատացվի 140 ցենտներ

100 գլուխ անասուն կլինի 125 գլուխ անասուն

Ինչպես պլատրաստել հնգամյակի անկյուն

Հնգամյակի անկյունում հարկավոր ե ունենալ—

1. Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի քարտեզը, զանազան նշաններով վրան նշանակված այն տեղերը, վորտեղ պլանով պիտի կառուցվեն նոր Փարբիկաներ, գործարաններ, ելեկտրակայաններ, յերկաթուղագծեր, շախմակ և այլն:

2. Վահան, վրան գրված «Մեր յերկրամասի հնգամյակը»:

Վահանը կարելի յե շինել ստվաբաթզթից կամ փաներից : Կարելի յե բաժանել 3 մասի . առաջինի վրա գրել «արդյունաբերություն», յերկրորդի վրա՝ «գյուղատնտեսություն», յերրորդի վրա՝ «կուլտուրաբարություն» : Յուրաքանչյուր մասում ողիսի կախել կամ կպցնել լրադրներից և ժուռնալներից քաղվացքներ, թե ինչպես և հնդամյակը իրականանում մեր յերկրամասում : Ամեն մի մասի վրա պիտի հսկի մի յեռյակ, վորի վրա պարտականություն և ընկնում լրացնելու, թարմացնելու արդ տեղեկությունները, նկարներ, դիմումաներ, լոգունդներ պատրաստել և այլն :

3. Մի աղյուսակ «Մեր կոլխոզի աշխատանքների մասին» : Այս աղյուսակը կարելի յե բաժանել 2 մասի . «մեր հաջողությունները» և «մեր բացերը» : Առաջին բաժնում պիտի տեղակոռել նկատողություններ, նկարներ, գիտակամներ, վոր կվերաբերի ցանքի ծավալթան, ազգութիւնումի կատարման, հարվածային բրիգադներին, սոցմրցման և կոլխոզի այլ աշխատանքներին : Եռյապես պետք է առաջ տեղեկություններ, թե պիտու վաշտը և դպրոցը կոլխոզին ինչ ոգնություն են ցույց տվել : Յերկրորդ մասում—գիտողություններ, նկարներ և այն ամենի մասին, վոր խռնդաբում են տնտեսության և նոր կենցաղի ամրապնդման :

4. Մի ուրիշ վահան կարելի յե շինել հետեւյալ գրությամբ՝ «Մենք և Հնդամյակը» : Այսուեղ պիտի տեղակոռել գիտողություններ, հոգվածներ, հաշիվներ, նկարներ, այլուրակներ, թե ինչպես ձեր դպրոցը, ձեր խուժը, ձեր վաշտը իրազործել և Համամիութենական պիոներական արշավի հակազը, վոր վերաբրում և բերքի բարձրացման, վնասատուների դեմ կովելուն, անդրագիտության վերացման, հարթեցողության և կրոնի դեմ պայքարին, հումույթ հավաքելուն և այլն :

Այսուղ կարելի յե ցույց տալ, թե դպրոցում իմբերն ի՞նչպես են մրցում իրար հետ, թե նչպես և մեր դպրոցը կոլխոզի դըպրոցի հետ մրցում :

Յերբ նոր նյութերը կպցնեք, հները սետք և հավաքել և ալրու կազմել ամեն մասի համար առանձին : Այդ ալրուները միշտ ել կարելի յե ուղարկործել դպրոցական ցուցահանդեսների և զեկուցումների ժամանակ :

Ց Ն Ա Կ

I. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՍԿԻՁԲ

	Եջ
1. Տպավորություններ պիտի կախել կամ	2
2. Մեր բաղադրի շիմարարությունը	5
3. Աշակերտական իմանալիքությունը	8
4. Խենչ վարչություններ մեր աշխուսի մասին	9
5. ԿիՄ	13
6. Գայիս և մի մեն (վու.)	14

II. ՄԱՍՆԱԿՑԵՆՔ ԲԵՐՔԻ ՀԱՎԱՓԻՆ

	Եջ
7. Նամակ կոլխոզի մայրիկին	15
8. Միշտ պարագաներ	15
9. Մեր ոգնությունը	17
10. Խենչ սունդեմի բամբակի թերթուալամին	19
11. Աշխուս գարցուական այգում	21
12. Բերքի տեսք	24

III. ԻՆԴՈՒՍՏՐԱՑԻՒՄ

	Եջ
13. Աշխատամեթք գարծարանում	26
14. Բամբակագուիչ գարծարանը	28
15. Զեր ունա գարծարանը	30
16. Խնչից և ինչպես և պարտաւումը բարեք	33
17. Ծառը լրացիր դարձալ 2 մ. 25 լովեյում	34
18. Տպարանում	35
19. Կաշի գարծարանը	37
20. Մեթենաները	41
21. Մեթենաներ (վու.)	42
22. Բազուն	43
23. Գյուղից Բալխամի	43
24. Բարածուխ	46
25. Համբերում (վու.)	48
26. Անդաշ	49
27. Անիվ (վու.)	50
28. Կրակի և յերկարի բազավրության մեջ	51
29. Յերգ Դոմի մասին	52
30. Յերկամի հիդրա-ելեկտրո-կայանում	54
31. Վարդագույն տուփի յերկրում	56
32. Այնուեղ ուր ուների եյլի բշում	59
33. Ժամացույց	60
34. Հեղամյակի 3-րդ տարին (վու.)	66
35. Վնասի տարին	68
36. Խորհրդային առաջին կոմբայնը	69
37. Առաջին զնացքը	77
38. Խոցմրցում	80



39. Հարվածային ժեռին	70
40. Գործարանի և բանվորների կյանքի ուսումնասիրություն	72
41. Ուտիլ հումուրի հավաքումը	73

**IV. ՀՈԿՏԵՄՐԵՐՅԱՆ, ՆՈՅԵՄՐԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈԽՐԴՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ**

42. Բագավորն ինչպես մի ոռոգին բաժանեց	75
43. Սերուկ Տիլյարայը և յերկգլխանի քաշումը	77
44. Հոկտեմբերյան (վու.)	79
45. Բանվորները կապիտալիստների լծի տակ	80
46. Մաղրանք	80
47. Կապիտալի վորդին և նրա չորս գեներացները	82
48. Պերեկոպի գրավաւմը	84
49. Հեղափոխական Անիկը	85
50. Հեղափոխական զինվորներն արքան հակում են	89
51. Հոկտեմբերյան հեղափոխություն	91
52. Քաղաքացիական կոհվեների գիրքերում	93
53. Մեր այցը ցերմանական դպրոց	94
54. Ա. Ս. Յ. և. Հ.	96
55. Փոքրիկ Տիմը	97
56. Շնորհակալություն	102
57. Փարիզի կամմունայի փոքրիկ հերոսները	106
58. Դեպի վերընտրություններ	106

V. ՆՈՐ ԿԵՆՅԱԴ


59. Ժողովրդական առողջապահության գործը մեզանում	109
60. Պահպանենի մեր աչքերը	110
61. Փոքրիկ դավագրություն	112
62. Ֆաքրիկ խոհանոցը	114
63. Ռական կես ժամ	116
64. Քաղաքի և գյուղի կուլտուրական կյանքը	117
65. Բատրակի նախակը գյուղացու տան վարիչին	120
66. Բանվորներ յերգը	120
67. Չերքեզուի իներիք	121
68. Կորչի չադրան	122
69. Հանգստյան տունը Պարագիլիսայում	123
70. Մեր կուրորտները	124
71. Բուժիչ ջուրը	125
72. Գյուղի հերիմը	127
73. Ի. Վ. Սոտարեն	130

**VI. ԾԱՆՈԹԱՆԱՆՔ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՆՐԱԳՐԻ ՀԵՏ**

74. Հնգամյակն արձակուրդ չունի	132
75. Տեղեկանի—դիագրամի, զեկուցումների, աղյուսակների համար	133
76. Ի՞նչպես պատրաստել հնգամյակի անկյուն	133

ԳԻՒԾ 65 ԿՈՊ. (6¹/₂ Ա.)

9225



ՅՈՆՅԻ ՍԴԱՐՆԻԿ
III դաս օպակ. (գոր. վարիանտ) I ամսաթիվ

Գոսизդատ ССР Վրաման
Էրևան—1931